# Բացատրագիր

Սույն նախագիծը կազմված է համաձայն «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ 06.02.2015թ. թիվ 13-01/ 151 գրության:

**Նախագծով նախատեսվում է ապամոնտաժել՝**

- 3-4-րդ առանցքներով բոլոր միջնապատերը
- 3-4-րդ առանցքներով շենքի բոլոր դռները
- 3-4-րդ առանցքներով մանրահատակից, տախտակից, լինոլիումից և կերամիկական հատակները
- Սան. հանգույցների պատերից և առաստաղից քանդել երեսապատման էլեմենտները
- Մետաղական կախովի առաստաղը, բոլոր փայտե շրիշակները

Պատերից և առաստաղից պոկել և մաքրել հին յուղաներկը, ջրադիսպերսիոն ներկը, պաստառները

- Մաշված էլեկտրական ցանցը:
- Ամբողջ ներքին ջրամատակարարման և ջրահեռացման ցանցը:

**Նախագծով նախատեսվում է կատարել հետևյալ աշխատանքները**

- Հատակները համահարթեցնել խարամով և երեսավաղով:
- Սան. հանգույցի պատերը սվաղել ցեմենտ ավազե շաղախով:
- Սան. հանգույցի հատակը և պատերը երեսապատել կերամիկական սալիկներով, սալիկների տիպը համաձայնեցնելով պատվիրատուի հետ:
- Հատակները երեսապատել կերամագրանիտե սալիկներով, լամինատով և մանրատախտակով, նյութերի տեսակները համաձայնեցնելով պատվիրատուի հետ:
- Կառուցել 12.0սմ բարձրությամբ կերամագրանիտե սալիկներով և պլաստիկ շրիշակներ:
- Համապատասխան բացվածքներում մոնտաժել կաղնեգույն մետաղապլաստե դռներ և պատուհաններ:
- Սան. հանգույցում և սրահներում կառուցել 600 x 600մմ չափերի բջիջներով կախովի «Արմստրոնգ» տիպի առաստաղ:
- Կատարել պատերի և առաստաղի զաջե սվաղի նորոգում:
- Պատերը և առաստաղը մածկել ծեփամածիկով և ներկել լատեքսային ներկով, գույնը համաձայնեցնելով պատվիրատուի հետ:
- Սրահները բաժանել դռներով12.0մմ հաստությամբ թրծված ապակե միջնապատերով
- Մոնտաժել նոր էլեկտրական ցանց յուրաքանչյուր հարկի համար առանձին բաշխիչ վահաններով:
- Նոր սան. հանգույցներում մոնտաժել ջրամատակարարման և ջրահեռացման նոր ցանց արդիական խողովակներով: